

ՏԱՄՆ ԵՒ ԵԾԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԿԱՌԻԹԻՒՆ

Մի առաջարկութեան առիթով.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գիծ հայ ուսուցիչների կեանքից. Նամակ երևանից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՈՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մերդա-թեոս.

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» № 41-ի մէջ տպւոյն Մանուկ Քաղաքի խմբագրին գրած մի նամակ. Նամակագիրը շատ համակերպի մտքեր է յայտնում առհասարակ, բայց մեզ մի բան է զարմացնում այդ նամակում, այդ այն է, որ և արտասահմանի հայ երիտասարդութիւնը նոյն հայացքներն ունի կեանքի երեւոյթների վրա, որ ունի և հայերի մեծամասնութիւնը իր բնիկ երկրում: Մեզ զարմացնում է, որ եւրոպայում բնակվող հայ երիտասարդութեան յատուկ են նոյն սովորութիւնները, յատուկ է նոյն անգիտակցութիւնը, նոյն ձգտումը հայոց շրջանում եղածից չօգտվել, եղածը չը գնահատել,— և միշտ կարծել որ նոր յայտնվող երեւոյթը, նոր հաստատվող գործը աւելի օգտաւէտ, աւելի աջող, աւելի պատկառելի, աւելի յարմար կը լինի, քան եղածները:

Չօգտվել եղածից և միշտ սպասել նոր երեւոյթների և ձեռնարկութիւնների,— ահա հայի յատկանշիչը: Բանը դրանումն է, որ նորերից օգտվելն էլ հայերի մէջ միշտ ժամանակաւոր, անցողական է լինում:

Դիցուք մի օրիորդական դպրոց արդէն գոյութիւն ունի: Հայ ունեւոր մարդը մեռնելով երեք մի որ և է դուժար չի կտակի եղած դպրոցին, այլ կաշխատէ մի նորը հիմնել տալ նմանապէս և հայ ինտելիգենտ մարդը մեծ յոժարութեամբ դաս չի տալ եղած դպրոցում այլ անհամբերութեամբ կը սպասէ, որ նոր դպրոց հիմնվի:

Հայ գրողը տարիներ կանցկացնի առանց մի տող անգամ գրելու, չը նայելով որ գոյութիւն ունեն հայոց մամուլի այլ և այլ օրգաններ: Բայց հէնց որ հայերէն մի նոր

օրգան կը հիմնվի, նոյն գրողը կը շտապի յօդուածներ տալ այդ նոր օրգանին:

Մեզ մօտ տարիներից ի վեր գոյութիւն ունեն հայոց մամուլի այլ և այլ օրգաններ, բայց մեր արտասահմանում ուսում առնող զիւղատնտես մասնագէտներ աւելորդ են համարում զետեղել իրանց յօդուածները եղած օրգանների էջերի մէջ: Բայց հաճախ միտք է յղանում երևանում մի շարքութիւն հրատարակելու,— և նոյն անձինք, որոնք տարիների ընթացքում աւելորդ էին համարում որ և է յօդուած գրել զիւղատնտեսութեան մասին, անմիջապէս ողևորվում են և խոտանում են իրանց աշխատակցութիւնը դեռ ևս գոյութիւն չունեցող լրագրին:

Եւ ի՞նչ զարմանալի, ի՞նչ տարօրինակ դատողութիւն. երևանեան նահանգը հարուստ, արդիւնաբերող նահանգ է, ուրեմն այդ նահանգին վերաբերելով զիւղատնտեսական յօդուածներ պէտք է զետեղել երևանի քաղաքում հրատարակվելի հայերէն թերթում, և ոչ թէ Թիֆլիսում հրատարակվող հայերէն օրգաններում... Կարծես թէ Թիֆլիսում հրատարակվող լրագիրը, շարքութիւններ, կամ ամսագիրը Թիֆլիսից դուրս փոստով ոչ մի տեղ չէ գնում, կարծես նա չէ հասնում երևան ու այնտեղ չէ կարգադրում:

Ընդհակառակն, դուցէ այն հայոց լրագիրը, որը երևանում կը հրատարակվի, նոյն իսկ երևանում աւելի պակաս թւով բաժանորդներ կունենայ, քան թէ նոյն քաղաքում բաժանորդներ ունի Թիֆլիսում հրատարակվող հայոց լրագիրը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳԻՐ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Ուսումնական տարին վերջանում է: Շատ տեղերից արդէն լսելի են լինում արտունայնի այս կամ այն ուսուցչի, այս կամ այն ուսուցչական խմբի կազմակերպութեան մասին: Անկասկած, այս տարի ևս, նախկին տարիների պէս, տեղի կունենայ ուսուցիչների մեծ փոփոխութիւն. ան-

խտիւր կը տեղափոխվեն արժանաւորներն էլ, անարժաններն էլ:

Այս երեւոյթը նոր չէ: Վաղուց ի վեր նա կրկնվել է և տարաբաղադար պիտի կրկնվի, որովհետեւ պատճառները քննելու ու առաջն առնելու հոգս չէ լինում: Մէկ կամ երկու տարի ծառայելուց յետոյ, ուսուցիչը թողնում է պաշտօնատեղն ու հեռանում. թէ որքան իրաւացի կամ անիրաւացի է վարվում, այդ ոչ ոքին, կարծես, չէ վերաբերվում, իրողութիւնը չէ պարզաբանվում, և եղևութիւնը առանց ձիշդ վերանայութեան է մընում:

Վերաստուգութեան բացակայութիւնը մեծամեծ չարիքներ է պարունակում իր մէջ, չարիքներ որոնք զրկում են ուսումնարաններին իրանց ցանկալի առաջադիմութիւնից. արդեք են լինում որ և է կանոնաւորութեան և կարգապահութեան:

Մի տեղ ուսուցիչը հեռացվում է, որովհետեւ յաջողիչն է դուր գալիս, միւս տեղում հեռացվում է, որովհետեւ ուսուցիչը վրաւորել է դործակալ քահանայի բարեկամին, երրորդ տեղում հեռացվում է, որովհետեւ հոգաբարձուի բրոյ որդին կամ ճորիկը թողը աւելի ձեռնադառն պայմաններով է ուղարկւում ծառայել... և այլն և այլն: Ինչպէս ուսուցիչների արձակելն է պայմանաւորվում այս կամ այն հոգաբարձուի, այս կամ այն վարդապետի ու գործակալի քահանայութիւններով, այնպէս էլ նոր ուսուցիչներ հրաւիրելու: Արժանաւորներին անարժաններից բաժանել չը կայ: Մի և նոյն է.— անընդունակ և անփորձ ուսուցիչին էլ նոյն պայմանները, նոյն ուժերն են առաջարկում, 10—15 տարի զանազան դպրոցներում կեանք մաշող, բարեխիղի և արդիւնաւէտ ուսուցչին էլ: Շատ անգամ արժանաւորները, իրանց գործին ազնաւար վերաբերվողները մինչև անգամ առանց պաշտօնի էլ են մնում, որովհետեւ յայտնի կերպով նկատում են, որ չեն գնահատվում իրանց արժանաւորութեան համեմատ:

Դիւթականապէս անապահով խեղճ հայ ուսուցիչը դուրս է մնում միայն երես քառասուն վարձատրութիւնից. նրան ոչ այսինչ չեն գնահատում, ոչ միայն բարոյապէս չեն խրախուսում, նոյն իսկ անիրաւարար վրաւորում, խոցոտում և հալածում են: Հիմնական պատճառներից մէկն էլ հէնց այս է, որ տարուց տարի ուսուցչական աս-

պարկից զգալի կերպով հեռանում են արժանաւոր մշակները: Թողնելով ասպարէզը այնպիսին, որոնք իրանց ճարտարութիւններով կարողանում են յարմար տեղեր ունենալ և սիրելի լինել միշտ:

Իրերի այս դրութեան պատճառը նրանումն է, որ դպրոցական ղեկավարները համապատասխան չեն իրանց կոչման. նրանք չունեն որոշեալ պատրաստակարմութիւն կանոնաւորապէս տանելու իրանց ստանձնած գործը:

Հոգաբարձուները անունով են միայն հոգաբարձու. ոչ միայն շարունակ վերաստուգութիւն չեն կարողանում ունենալ, թէ ինչ է կատարվում ուսումնարանում, այլ նոյն իսկ ժամանակ չեն կարողանում ձեռք բերել տնտեսական հաշիւները կարգի բերելու, ընթացիկ ծախսերը ժամանակին հոգալու: Այս այսպէս է բացառութիւն շատ հաւաքեալ է:

Հոգաբարձու ընտրելիս՝ ընդհանրապէս աշխատում են դիրք ունեցողներից և յաջալի էլ բարձր ուսում ստացողներից ընտրել: Ընտրութիւնը աջող է համարվում, երբ ընտրվում են փաստաբաններ, բժիշկներ, և այլն. սակայն առանց ուշադրութեան է թողնվում այն կէտը, թէ որքան համապատասխան են այդ մարդիկ իրանց մասնագիտական կամ անձնական զբաղմունքներով. արդեք, միջոց կունենան օգտաւէտ լինելու, չճշմարտութիւն, թէ ոչ: Դառն իրողութիւնը ապացուցանում է, որ «տուրք տուրք» խօսելուց, «սքանչելի» տենչանքներ արտայայտելուց ոչինչ չա՛յ չը կայ: Զբաղմունքներով ծանրաբեռնված դասաւանդական մասնագէտ բժիշկ կամ փաստաբան հոգաբարձուն ոչ միայն չէ կարողանում յաճախակի այցելել ուսումնարան, այլ և եթէ երբեմն այսպէս կարողանում է մասնակցել հոգաբարձական ժողովներին, այն էլ շտապով որպէս զի ժամանակ չը լինի կորցրած: Ապարէզը մնում է այնպիսիներին, որոնք թէ և ժամանակ և ցանկութիւն ունեն գործելու, սակայն չունեն համապատասխան ընդունակութիւն, և ոչ էլ կարողութիւն ընտրութիւն անելու, չը դիտեն որոշել արժանաւորին՝ անարժանից, բայց դատաւոր են հանդիսանում, վճիռներ են կայացնում ուսուցիչներ արձակելու ու ընտրելու վերաբերեալ: Իմք ունենալով իրանց սահմանափակ զիտումները՝ Ուսուցիչներ վարձելու գլխաւոր հիմքը կազմում

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻՐԶԱ—ԹԵՒՈՍ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻՑ

(8 իշ ող ու թ իւ ն ն եր)

II

— Ինչ որ չը լինի, այդ մարդը իր ժամանակին աւելի քիչ պակասութիւններ է ունեցել, ասեց Միրզա-Պետրոսը, քան այսօրվայ մեր միջոցները: Պ. վարժապետ, դու այստեղ չէիր, անցեալ տարի մեր մի պոլսեցի հոգաբարձուն աշակերտների առաջ Միրզա-Մկրտումի՝ ձեռքից ձեռափայտը երբ առաւ, տասը դաղ հեռու շարժեց «աշակերտը գնդակ կը խաղայ, դու՛ն սա տեղ կայնած էքէնդու մը պէս բառո՛ղով կը զրցես» ասելով, Միրզա-Պետրոսի պէս մարդը որ չէր դիմանայ այս անպատուութեան, Միրզա-Մկրտումը որ այնպէս մեր առաջ խորտաւում է, չներողութիւն: ասելով դնաց, փայտը վերցրեց՝ և մինչև նրա հեռանալը՝ չը համարձակվեց մի խօսք խօսել: Եթէ սա Միրզա-Մկրտումը, շատ ու քիչ կրթված նոր մարդը, այսպէս ստորացաւ, և իմ արածն էլ յիմարութիւն անուանեց *), էլ ի՞նչ պահանջել մի հին վարժապետից, այն էլ տառը,

*) Պոլսեցի հոգաբարձուն իր մի անվայել խօսքի համար սրանից բարոյական ապուսակ էր ստացել:

տա՛ն ու հինգ տարի առաջ աւելի կատարի աշակերտի ձեռքում: Բացի այդ՝ Միրզա-Պետրոսը եթէ երբեմն ստիպվում էր ծառայել գործ էլ կատարելու, ուժեղի համար հոգաբարձուի դրանք կամ խոհանոցում ծածկելով սպասելու և էլի դատարկաձեռն տուն դնալու, գոնէ համոզված էր, թէ այս բոլորը իր մեղաց պատժն է, որպէս թէ Աստուած էր կամենում Յովրի պէս իր համբերութիւնը և հաւատը փորձելու: Սրա համբերութիւնը որ ծով էր: Միւս միջոցների պէս սա չէր ծնծի, ալ ու ձախ չէր ջարդի, այլ, անխնայ իր օրը՝ կը համբերէր: Միրզա-Պետրոսի սարսափելի հայհոյութիւններից ոչ մէկը չէր լսվի սրա բերանից: Պակասութիւնը, ինչպէս ասվեց, դասարանի մէջ մէկ մէկ ննջելն էր և աշխարհաբարից հեռու լինելը...

— Ո՛րտեղ է ստացել դա իր սկզբնական ուսումը:

— Ի՞նչ ուսում, մեղ պէս սա էլ իր ուսումը: Այս և այն տիրացուի և տէրերի մօտ է ստացել: Եթէ հարցնես՝ թէ ինչու Գրիգորոս իր արքայութիւնը թագուցեալ խմորին և փողերի մասնակիւն է նմանեցնում՝ չէ կարող պատասխանել, կամ շատ շատ մեր հասարակ տէրերների ձեռով կը բացատրել: Իսկ եթէ հարցնես՝ ինչ կը նշանակի գրաբար՝ ն ու, նա իսկոյն կասի հարու: Յիշում եմ մի անգամ այս խօսքից յետոյ նրան հարց եղաւ. «Միրզա-Պետրոս, դու կիմանաս, քանի հարս ունէր Սողոմոնը»: Նա լմնողայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ՝ ասելով, մէկ էլ տեսանք անյայտացաւ: Բայց չէ պատահած, որ այդ մարդը

բամբասէր, սրանից նրան խօսք տանէր, բերէր ու մէկի ձեռքին գործիք դառնար, որ հազապիստ յատկութիւն էր Թաւրիզում իսկ կարծիք յայտնել, վիճել, աղային «ոչ» ասել, նրա վատութեան դէմ կուէր, այդ ի հարկէ, դիտես թէ ինչ ծանր պատահաններ են ուսուցչին համար Թաւրիզում: Լաւ է դռնէ, որ սա մեր այժմեան միջոցների պէս ստորաշնալով, վատութեան տարածող, օգնող չէ: Սա քաղցած ժամանակ կը դնայ իր պէս մի խեղճ մարդու տուն, լուռ ու մունջ իր քաղցածութիւնը կը հասկացնի և նրա աղքատ սեղանին կը մասնակցի, բայց վատամարդի հարուստի ամանները լցատող կատու չի դառնայ երբեք:

Միրզա-Պետրոսի մասին այս պատմութիւնը լսելով, աւելի ևս մտադրվեցի մօտից ծանօթանալ նրան, ուստի այս մասին իմ միտքը յայտնեցի խօսակցիներին:

— Իղւիւր, ասեց Միրզա-Պետրոսը, համարեա թէ անկարելի է այդ. նա վայրի այծնամի պէս զգոյշ և ունեւ պէս փշերով ծածկված, երկչոտ է: Միրզա-Պետրոսը հազիւ թէ մէկին սիրտ բանայ և մի երկու խօսք ասի իր մասին: Նա մինչև այսօր մի «կերամեծարի» հեռուից տեսածին պէս ճանաչաւրը կը փոխի, նրա հետ պաշտօնով ընկեր եղածներն էլ չեն կարողացել զուրկ հանել նրանից, դժուար թէ աշուղի նրանից բան հասկանալ: Գուցէ ասեք, որուն և երկչոտ դարձնողը նրա թշնամին է, բայց կը սխալվեք, որովհետեւ Միրզա-Պետրոսը այնպէս չէ վայրենացել, որ կարողանաք ընտանի դարձնել:

— Ա եօխ մ, (ամենին) աղա, եզրակացրեց մարտիցին, էտիկ խէյլ չաթին (չատ դժուար) մաւլահաթ ա, ասած ա. «սիրվիման գիրան, ջանընան չխաւ» (կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կը գա):

III

Երբեմն մարդ այնպիսի տեսարաններ է պատահում, որոնց ներկայացնելու, մօտաւոր դադար փար տալու համար գրիչը անգործ է. պատկեր, դերասան և բեմ է հարկաւոր:

Այդպէս էլ բաւերով դժուար է ներկայացնել այն ամաչկոտ շարժողութիւնները, այն հառաչանքները, այն լուռ գլխակործութիւնը, մի խօսքով այն փշրված պատկերը, որ տեղի ունեցաւ իմ և Միրզա-Պետրոսի հետ խօսակցութեան ժամանակ:

Թաւրիզում զտնված ժամանակաւ, երեք տարվայ մէջ միայն մի անգամ աշուղից ինձ երեսու երես հանդիպել Միրզա-Պետրոսին և այդ էլ հետեւեալ պատահական դիպագածով:

Առաւօտեան պարագիծները դպրոցում վերջացնելուց յետոյ, ճաշից անց՝ միայնակ ման էինք դալիս տան առաջի բաղու: Դրսի դրան կամայ փակվելու ձայնը լսելով, կանգ առայ մի րօպէ: Փոքր ժամանակից յետոյ հալածված նա՛ս պատակել պէս երևաց Միրզա-Պետրոսի երկչոտ գլուխը: Այլ ու ձախ իլլկոտեղով՝ նրա լայն բացված աչքերը հանդիպեցին իմ աչքերին: Նա կարծես սթափվելով մի քայլ յետ դնաց և անվճռականութեան մէջ կանգնեց:

է սակարկութիւնը. ուսուցչի բազմը որովորում է կօպէկնեմով. այն ուսուցչին է դառնում առաջին թեկնածուն, ով չմի քանի բուրյով պակաս) համաձայնում է ծառայելու Ուսուցչին ընտրելու այս անհեթեթ եղանակն է, որ առիթ է տալիս բազմաթիւ որոշումներին, իւրաքանչիւր ուսումնական տարվայ վերջում, դիմելու ամենատարբեր միջոցներին՝ այս կամ այն տեղը կամ պաշտօնը որից յափշտակելու համար:

Ուսումնական այն գոյնը երևոյթը, որ գոյնը ընթանում է ուսուցչական խմբեր կազմակերպելու: Մի և նոյն ուսուցչին ոչ թէ միայն բաւականանում է իր ծառայութիւնը մի և նոյն ժամանակ առաջարկելով՝ դանադան հոգաբարձութիւններին, այլ և այլ թեմական առաջնորդներին, բայց և անհերքելի միջոցներ է դիմում. — տեղեկանալով, որ այս կամ այն ուսուցչին դիմել է այս ինչ հոգաբարձութեան այս ինչ պայմաններով, կամ թէ չէ որ և է հոգաբարձութեան դիմել է իր ընկեր ուսուցչին այս ինչ պայմաններով, ինքը շտապում է նոյն հոգաբարձութիւններին իր պատրաստակամութիւնը յայտնելու աւելի ձեռնտու պայմաններով, այսինքն մի քանի բուրյով պակաս կամ մի քանի դաս աւելի վերցնելով....

Այս դեռ պատկերի մի երեսն է, որը պարզ տեսնւում է նոյն իսկ Թիֆլիսում, ամարային արձակուրդին, ուսումնական տարվայ սկզբին, պատկերի մի և նոյն երեսը աւելի ահւելի կերպարանաւոր երևան է գալիս գաւառներում, ամբողջ ուսումնական տարվայ ընթացքում՝ մանաւանդ ուսումնական տարվայ վերջերում....

Եթէ քննորէն վերաբերելու լինենք մեր դպրոցական կեանքին, անշուշտ կը նկատենք, որ համարեա ոչ մի դպրոցի ուսուցչին մէջ համարաշխուրդ չը կայ, չը կայ մտերմութիւն, չը կայ ընկերութիւն, չը կայ ընդհանուր գործունէութիւն, այլ կայ երկպառակութիւն, խռովութիւն, ինտրիգա և սահմանափակ կուսակցութիւն: Յանկարծ կը նկատենք, որ 7—8 հոգուց բաղկացած ուսուցչական խմբի մէջ մի քանի կուսակցութիւններ կան, և այն էլ ամենախայտառակ կերպարանքով և ձգտումներով:

Դատում, դատապարտում են միմեանց ոչ միայն զոյն չը շանքներում, այլ և ընտանիքներում, նոյն իսկ տաների ներկայութեամբ, որոնք ուշադրութեամբ ունենցող են լինում իրանց դատաւարականների բաժնետանքներին:

Եւ ինչու համար. արդեօք դադարաւոր, մանկավարժական սկզբունքներով, ուղղութիւններով... տարաբաղդաբար ոչ մէկի և ոչ միւսի. — չար նախանք, շահամոլութիւնն է բոլորի սկզբնապատճառը:

Ինչու նա պիտի լինի տեսուչ և ոչ թէ ես. Մարկոսը ինչու 25 դասի համար 500 ր. պիտի ստանայ, իսկ ես՝ 400: Կիրակոսը ինչով է ինձանից բարձր, որ նրա ուսուցչական երեսն է, իմը ոչ, քանի որ երկուսն էլ նոյն առարկաներն ենք աւանդում....

Իսկոյն իմացայ, սր փողոցում անպատճառ մի որ և է՝ գերամեծարի է պատահել խեղճը և նրանից խոյս տալու համար է, որ անպատարանի տեղ ընկել է իմ թակարդը:

Այս անակնկալ դիպուածից դո՞ւ մօտեցայ նրան, համեցե՞ք, համեցե՞ք՝ սասկալ:

Ինչո՞ք գլուխը կորցրածի՞ պէս մնաց տեղում մեխված և ապա քթի տակ գլուխը թափառաւրելով:

— Մեղայ Աստուծոյ... մեղայ քեզ Տէր... մրմնջաց և ուշքի գալով, աջ ձեռքը կրծքին, ամաչկոտ խոնարհութեամբ:

— Ո՛հ, ո՞չ, դուրբան, ներեցե՞ք, ներեցե՞ք, խնդրում եմ....

— Համեցե՞ք, խնդրում եմ:

— Ո՛չ, աղա, ախար աղա... չես իմանում... ես վա՛նջ... վաճառք, նեղութիւն տուցի... կասեմ բեռքի կարելի է....

Այստեղ կանգ առաւ, չիմանալով այլ ևս ինչ պէս շարունակի: Նրան այդ դժուարութիւնից հանելու համար, քայլերս դէպի՝ բակի տախտակ ուղղելով:

— Գիտեմ, ասեցի, աղաներին չես սիրում, շատ էլ լաւ ես անում, բայց չէ որ ես էլ ձեռք պէս մի վարժապետ եմ:

— Աստուած մի արասցէ, դուրբան, Աստուած մի արասցէ, ասաց նա մեքենայաւոր շարժելով իմ ետեւից... փառք քեզ Տէր, փառք քեզ յաղագս ամենայնի....

— Ինչպէս «Աստուած մի արասցէ», հարցրի

Այսպիսի պատճառներից սկսվում է կատաղի մրցութիւն, մրցութիւն՝ ամենատարբեր ճանապարհներով:

Մրցութիւնը սկսվում է հոգաբարձութիւնին շտապարկելով, նրանց քանահաճութիւններին ստորակը դառնալով՝ նրանց հաճութիւնը գրաւելու համար: Այս եղանակը տեղի է տալիս լայնածաւալ լրտեսութեան, որը շարունակվում է ուսուցչներին ու հոգաբարձութիւններին, ուսումնական ու հասարակութեան մէջ: Հակառակորդի գիտութեան, արժանաւորութեան վրա ցեխ գցելը, նրա բարոյական նուշեման վրա չարախօսելը սովորական երևոյթներ են գաւառներում, — ամեն միջոց ներկի է դառնում, և բամբասանք, և լրտեսութիւն, և անստորադիր նամակներ և շողջորդութիւն: Եւ ճշմարիտ որ մենք անընդունակ ենք հրապարակել մեր համաձայնութիւնն ու անհամաձայնութիւնը, բարեկամութիւնն ու թշնամութիւնը արտայայտելու. մենք չունենք կարողութիւն՝ ազնաւարտ վերջինգիլով լինելու: Մենք դիտենք անկրճանքից միայն «կուկուալ», պատերի ետևից ցեխ գցել միայն:

Եւ եթէ այդ անում է հայ վաճառականը, հայ արհեստաւորը, այդ այնքան պիտարակելի չէ, որքան այն, երբ նոյնը անում են դպրոցի մէջ գործողները, վարժապետները, որոնք կոչված են կրթութեան գործը ղեկավարելու և սերունդ կրթելու: Գաղութական ասպարիզում և մանկավարժութեան ներկայում անձանց չը շտապում այդ տեղը երևոյթը — կրթական ցուցանիշներն և անպայման յանդիմանութեան արժանի է:

Մ. Հ. Վ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 5-ին

Չատիկը մօտենում է թէ չէ, հայերը ըստ սովորութեան պատրաստութիւններն են տեսնում աւելի չքով՝ դիմաւորելու այդ տօնին: Մտէք իւրաքանչիւր հայի տուն և կը տեսնէք ամեն տեղ մի տեսակ ուրախ շարժում, ինքն ըստ ինքեան այդ շարժումը, այդ ոգևորութիւնը, տնային և հագուստի վերաբերեալ վերանորոգութիւնը, եթէ այդպէս կարելի է ասել, ուրախալի է. բայց չենք կարող ժողագրութեան տալ մի տեղը երևոյթ, որը հետզհետէ տարածվում է մեր քաղաքում: Այդպէս է, որ Չատիկը մօտեցաւ թէ չէ, երևանցի կինը պահանջում է իր ամուսնուց առհասարակ ընտանիքի համար ուժից բարձր ծախսեր անել, մեծ պատրաստութիւններ տեսնել, առանց նայելու թէ արդեօք նա ունի միջոց իր պահանջները կատարելու թէ ոչ. և այդ երևոյթը աւելի տեղի է հէնց այն պատճառով, որ աւելի քան արմատացել է մեր աղքատ դասակարգի մէջ: Շատ անգամ կնոջ միայն Չատիկի համար եղած պահանջը աւելի շատ է լինում, քան ամուսնու մի քանի ամիսների ամբողջ աշխատանքը. դրանից ընտանիքն մեծ երկպառակութիւններ են ծագում:

Նրան տախտի վրա նստել առաջարկելով — Չատիկ (նեղութիւն) մի քաշե՛ք, դուրբան, դուք համեցե՛ք նստեցե՛ք, ես կը նստեմ....

Համաձայնեցի և իրան էլ ինձ մօտ տեղ ցոյց տուցի: Նա իր գունատ դէմքի երկու փեշերը, ծայրերից բռնելով, միմեանց մօտեցրեց և որպէս փշերի վրայ... «Տէր ողորմա՛ս» ասելով նստեց բաւական հեռու, և աչքերը գետնին ուղղելով լռեց:

Իմանալով նրա թուլութիւնը, ծառային նշանացի իմացրի՝ մատուցալ *) բերելու:

— Մերգա-թևոս, չասեցիր, թէ ինչպէս Աստուած մի արասցէ, Աստուած մի արասցէ, որ աղա չը լինեմ:

— Չէ, դուրբան, Աստուած մի արասցէ, որ դու ինձպէս վարժապետ լինես, ասաց նա ծանրութեամբ ինձ խօսքի վրա չը շտապելու և գլուխը վեր ու վար շարժելով:

— Չե՞ղ պէս վարժապետ չեմ՝ ապա ի՞նչ եմ: Չանաղանութիւնը հասակն է և հագուստը, մէկ էլ որ դուք անհարկաւոր տեղը շատ էք խղճացել:

— Մտրուկ, ստրուկ, շտապեցի ասա, դուրբան, այս անգամ էլ գլուխը աջ ու ձախ շարժելով:

— Այժմ Յովիտի տեղ Գաւիթի է հարկաւոր, Մերգա-թևոս, որ Գողեմաթը նրան կախ չը տայ:

Մերգա-թևոսը Յովիտի հետեղը լինելով, կար-

*) Չատիկը առանձին ձևով՝ պատրաստած օղի, որը շատ գործածական է Թաւրիզում:

մեզանում: Ոչ միայն դուզվելու ձգտումն է, որ պատճառ է դառնում մեր աղքատ դասակարգի հետզհետէ բազմաթիւ, այլ և այն, որ իւրաքանչիւր մէկը իր Չատիկ օրվայ այցելուների համար պատրաստած սեղանով աշխատում է դեռազանց իր հարեանից: Եթէ տան մեծը չէ կատարում կնոջ պահանջները, դա արդէն երկպառակութիւնների համար մեծ սկզբնապատճառ է:

Մտնողի շտապութիւններն ու ցուցամոլութեան համար կուր գցել ընտանիքի մէջ, — ի հարկէ դու վերի բան չէ, և այդ պատճառով մենք անհրաժեշտ ենք համարում մատնանիլ անել այդ տեսակ դուցէ և երկրորդական տեղը սովորութիւնների վրա, որոնք գնալով դարձանում են, և ի դուր տեղից աղմուկներ են յարուցանում ընտանիքին չը շտապում:

Սրանից աւելի տեղի երևոյթ է մեր քաղաքում մարդու կնոջը ձեռնը. այս ախտը բոլորովին յատուկ չէ հայրին և որքան մեղք դիտել ենք, դա տեղի չէ ունենում դիւրեւում. հաւանական է, որ այդ բարբարոս սովորութիւնը մեր մէջ մտել է պարսկականներից: Ուսումնական, որ պարսկների մէջ կինը մի տնային սպարանք համարվելով, վարվում են նրա հետ այնպէս, ինչպէս և կամենում են: Եւ ահա հայերի մէջ էլ մտած գործելով այդ հասկացողութիւնը, աղամարդը կնոջ վրա նայում է այնպէս, ինչպէս պարսկների աղղեցութեան տակ մեծացած իր կամքն է թելադրում:

Այդպիսի յարաբերութիւնը դէպի կինը, որ հետեւանք է, ի հարկէ տղիտուրութեան, լաւ երևոյթ է և տարաբաղդաբար կնոջ ձեռնը սովորութիւնը օրից օր աւելի տարածվում է, քանի որ մեր այժմեան ընտանիքն կեանքում կնոջ և մարդու մէջ դժգոհութիւններ յարուցանելու առիթները բազմաթիւ են:

Եւ քանի որ երևանցին այդպէս կը վերաբերվի դէպի իր կինը, կը նայի նրա վրա իբրեւ իրաւագործ արարածի վրա, կինն էլ իր բռնած ուղղութեան մէջ կը մնայ և ընտանիքից մշտական երկպառակութիւնները երբեք չեն վերջանայ: Անկասկած, երբ աղամարդը կը վերաբերվի դէպի կինը իբրեւ իր ընկերակցին, իր խորհրդակցին, իր հետ հաւատար իրաւունք և պարտք ունեցողին, այն ժամանակ հաւատացած պէտք է լինի, որ ընտանիքն կեանքը աւելի զբաւիչ և աւելի ոգևորիչ կը լինի ամեն մի տղամարդի համար: Իսկ այդ կէտը ուշադրութեան արժանի էր, որովհետև վերջին ժամանակներս ամուսնութեան պրօցենսը մեր քաղաքում ընդհանրապէս պակասելով պակասում է:

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարաթ օր, ապրիլի 15-ին, կայացաւ Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում պ. Կարա-Մուրադայի երեզելի խմբի երկրորդ և վերջին կօնցերտը, որը

ծես, մի առանձին գիտաւորութիւն նկատելով այս խօսքերի մէջ, նախ դարմացական մի հայտնացք ձգեց իմ վրա և ապա գլուխը կրկին վայր իջցնելով մրմնջաց.

— Մեղայ, մեղայ Տէր յերկինս և առաջին քո....

— Միւրգա-թևոս, երկի մտածում ես, թէ վարժապետը դեռ երկտաւարդ, անխորձ է:

Լուռ երեւան նայելուց յետոյ՝

— Ինչ ասեմ, Աստուծուն յայտնի է ճշմարիտն և արդարը:

Նրանից բան դուրս քաշելու տեղ՝ զգացի, որ ինքս նրա գլխին վարժապետ էի դառել, ուստի մտածեցի մեր խօսակցութեանը այլ կերպարանք տալ:

Այս ժամանակ ծառան մատիկան բերեց: Մերգա-թևոսը, գլուխը կտր, մտածութեան մէջ էր:

Մատիկան բերականներ մէջ ածելով՝

— Մերգա-թևոս, ասեցի, ինչպէս ես, այժմեան վիճակիցդ դո՞ւ ես, թէ ոչ:

— Ե՛ս, օրհնեալ է Աստուած: Ե՛նչ մնայ Աստուծոյ տունը.... մի կերպ կառավարվում եմ, դուրբան:

— Ինչու քանիսն չէք դառնում, մեր այստեղի քահանաները մի կարգին գլխը կարդալ էլ չեն իմանում:

— Ո՛նց պատմեմ... դժուար է: վարժապետ, ինձ ի հասակի ձեռութեան....

— Ինչ դժուարութիւն, դժուարը գիրք կարդալն է, որ գիտե՞ք:

Նոյնքան աջող էր, որքան և առաջինը: Բազմաթիւ հասարակութիւնը կրկնել տուց մի քանի եղանակներ և վարժատրեք երգիչներին ոգևորված ծափահարութիւններով: Բացի բուն հայոց եղանակներից այս անգամ խումբը, երգեց մի երկու եւրօպական կտորներ, ինչպէս, օրինակ՝ «Հենդէլի «Եկեղեցական եղանակը» և Վէբերի «Աղմոս ասեցե՛ք» երգը: Այդ կտորների գեղեցիկ կերպով կատարելը ապացուցեց մեզ որքան լաւ է կազմված և որքան լաւ է ղեկավարվում Կարա-Մուրադայի երգեցիկ խումբը: Անմիջապէս կօնցերտից յետոյ խումբը երկաթուղով ճանապարհ ընկաւ դէպի Բագու:

Այս օրերս վախճանից ԹԻՖԼԻՍԻՄ մեր քաղաքային վարչութեան մէջ մանր ծառայողներից մէկը՝ Յարութիւն Շահվերդեան. Դա 25 տարուց աւելի է ծառայել նոյն վարչութեան մէջ, ռուսական ամական մօտ 50 բուրժի, և վերջին ժամանակ որբերի դատարանի քարտուղարի պաշտօն վարելով: Եւ ահա չորս ամսվայ ծանր հիւանդութիւնից յետոյ, ողորմելի մեռաւ. անհկարգութիւն թշուառութեան մէջ թողնելով իր ամբողջ գերդաստանը, որը բաղկացած է՝ կնոջից և վեց զաւակներից, որոնց մէկը, աղջկից, միայն չափահաս է: Ինչ պէտք է անեն այդ թշուառները, սովորաբար չը մտնելու համար նրանց մեռում է միայն, մարդկերանց գոյնը շարժել: Այդպէս են մեռնում այնպիսի աշխատաւորներ, 25 տարե շարունակ ծառայած մարդիկ, և այդ տեսակ թշուառ դուրսերն է իրանց ընտանիքին՝ հասարակութեան կողմից տուած վարձատրութիւնը: Իսկապէս աղքատ մարդիկ չը պէտք է պակսվեն....

Վերջին ժամանակներս ԹԻՖԼԻՍԻ փողոցներում բաւական բազմացել է մուրացկանների թիւը:

«Մշակի» № 38-ի մէջ տպված «Հայեր և վրացիք» վերնագրով առաջնորդող յօդուածը, որը գրված էր «Մշակի» № 39-ի մէջ տպված Մօսկվայի մի նամակի առիթով, ինչպէս երևում է, համակրութիւն գտաւ վրաց մամուլի կողմից: Թէ ինչպիսի առաջնորդող յօդուածը և թէ Մօսկվայի նամակը, ամբողջապէս վրացերէն լեզուով թարգմանվելով տպվեցան վրաց լրագրի № 79-ի մէջ:

«Վերջին» լրագիրը հաղորդում է, որ ԳՈՐԻ բաղաժամ բացվեց մի փոքրիկ տպարան, որը պատկանում է պ. պ. Կալանդաճեան և Չարիճեան:

Մ.

Ինչպէս ամեն տարի, նոյնպէս և այս տարին, Չատիկ երկրորդ կերակի օրը ԹԻՖԼԻՍԻ Մալաթի կոչված սարի վրա տնադին բազմութիւն էր հաւաքվել, այնպէս որ կարծես մարդիկ միմեանց վրա թափված լինէին: Երբ աղղութեան պատկանող այդ բազմութիւնը զլխաւորապէս հաւաք-

— Դրա համար մեծ էլ մեղք կուզի, դուրբան....

— Ինչ մեղք, հարցրի բաւական գոհ, որ կառողացայ վերջապէս շարժել նրան:

— Մեղք, այսպէս որ մարդ պէտք է շատի ձեռքը համբուրի:

— Որ յետոյ իրանը համբուրեն:

«Դէր, Տէր, պահապան բերանոյ իմոյ....» ասաց նա մրմնջալով և ոչինչ չը պատասխանելով:

— Ես որքան տեսնում եմ, Թաւրիզում քահանայ լինելուց յետոյ էլ են շարունակում, ասեցի:

— Մի խօսքի բերան իմ գլուխը մարդկան.... ասաց կրկին մրմնջալով:

— Մերգա-թևոս, համեցե՛ք մատուցալ անուշ ատրճի:

— Ինձ խաջալաթ էք տալիս, ախար....

— Ոչինչ, գիտեմ սիրում էք օղին...

— Դուրբան, սիրում չէի, բայց....

— Բայց սիրել տուին:

— Հիմ, հիմ.... ասաց նա շրթունքները սեղմած խորհրդաւոր շարժելով գլուխը:

— Փառք իր ողորմութեան.... Տղայ քեզ Տէր ըստ սրտի քուս... Աստուած ձեզ երկար կեանք բաշխի:

Դուրբան, ինձ... ես ձերացել եմ (Կը շարունակվի)

վել էր այդտեղ այն պատճառով, որ այդտեղ այդտեղ դառնում էր անհրաժեշտ, որի տունն էր այդ օրը: Կոնստանդնուպոլսի համար, որտեղ այդտեղ պատահում են ամեն տարի ժողովրդի մեջ, չորսուներեք հազար հայեր են հրացանակիր զինուորային մի քանի խմբեր:

Մեզ խնդրում են տպագրել հետևյալ երկուդրոշմ: «Առաջ քան անհատական և երեցիկները կենդանու պաշտօնականները մեջ ամենապատշաճ են: զրանց փոխադարձ համաձայնությունը և համարադրությունը է կախված եկեղեցու թե ներքին և թե արտաքին բարեկարգությունը Այդ պատճառով այդ երկու անձնակազմերը անհատական, չնչին բաների համար չը պետք է դժգոհվեն, անտեղի կոնստանդնուպոլսի երկրպագությունները պատճառ դառնան, որ եկեղեցուն և ծխականներին ոչինչ օգուտ, չա՛հ չը տալուց դատ, մեծամեծ վնասներ, երկպառակություններ և եկեղեցու անբարեկարգություն պատճառ է դառնում: Այդ տողերը գրելու առիթ տուեց այն տեսակ իրողությունը, որ տեղի է ունեցել նորեքուսու թիֆլիսի Նորաշեն եկեղեցու առաջ քանակային և նոր եկեղեցու երեցիկների մեջ: Գործողությանը այդ դժգոհությունը ծագել է մի շատ անշնչան, չնչին բանի համար: Գոտություն պատճառ եկեղեցու ամեն նաստորթին պաշտօնական—մարմին է, որին ա. քահանան ուղղում է արձակել, բայց երեցիկները հակառակում է: Ասում են, որ առաջ քան անհատական այդ մասին նախապես խոսում է երեցիկների հետ և նրա համաձայնությունը էլ առնում է: Միջոցին երբ լսում է, որ երեցիկներն էլ համաձայն է ա. քահանային հետ, սկսում է նրան սպասել, որ եկեղեցուն նրա մատուցած բոլոր հաշտությունը (?) ծառայությունները նա հրապարակ է հանելու: Մենք, ի հարկէ, դժուարանում ենք հաւատալ այդ լուրերին, բայց երեցիկների վարմունքը և բռնած դիրքը հաստատում է «դո՛ւր սիրած դո՛ւ» առածը, որ ցանկալի չէ: Այդ բանից յետոյ երեցիկները ճկում է իր ամբողջ ուժով հակառակել միջոց արձակմանը, ասելով՝ քանի լինեց երեցիկները, պետք է ինչպէս դադարեցանք միջոցին էլ լինի: Համարիտ, մարդ ակամայից ստիպված է հաւատալ, այս բոլորը ի նկատի ունենալով, որ երեցիկների խիղճը մաքուր չէ. այնպէս դժուար է բացատրել երեցիկների հզոր դիմադրությունը եկեղեցու մի ամենատարբեր, անշնչան պատճառների համար, չը նայելով, որ բարեկարգին անդամ յայտնում է ինչպէս բարեկարգ երեցիկներին, որ այդ բանում ինքը չը պետք է միջամտի, որովհետեւ այդ առաջ քանակային իրականությունը իրականում է, մասնաւոր չը միջոցին հեռացնելու պատճառները շատ յարգելի են. արժէ միթէ մի մեղք դուր, մի ժամկույն պատճառով եկեղեցին և ժողովուրդը երկպառակել. միթէ պատիւ է բերում մի երեցիկներին, որտեղացի դպրոցի մի հոգաբարձուին այդպիսի վարմունքը, որ քիչ է մնում մեղք դուր պատճառով եկեղեցին և ուսումնարանն իրար անցնեն: Այս կարգի մարդկանց վարմունքը միթէ անպատեհ պիտի անցնեն և նրանք կը կարողանան իրանց համարադրությունները շարունակել:»

Ապրիլի 16-ին, կիրակի օր, կայացաւ Թիֆլիսի Աւետարական բանկի ակցիոններին ընդհանուր ժողովը: Այդ ժողովում ի միջի այլոց տեղի ունեցան խորհրդի և վերատեսչական յանձնաժողովի հերթով դուրս գնացող անդամների ընտրությունը: Գաղափար քուէարկութեամբ բանկի խորհրդի համար ընտրվեցան՝ պ. պ. Ս. Մանթաշեան, Կ. Մուրադեան, Կ. Ալիխանով, Գուրգենով և Ե. Գալիլեով:

Ապրիլի 16-ին, Թիֆլիսի իգական գիմնազիայում տեղի ունեցած ակտի ժամանակ, որը կատարվեց գիմնազիայի գոյություն 24-ամեակի տարելու օրը, տրված հաշից երևում է, որ այդ գիմնազիայից աւարտել են 24 տարեկան ընթացում, եօթներորդ դասարանից 643 աշակերտներ, իսկ եօթներորդ մանկավարժական դասարանից՝ 486 աշակերտուհիք:

Մեր ունեցած տեղեկություններից երևում է, որ Թիֆլիսում Պարսից շահի ընդունելությունը բաւական չեղել է լինի, որի համար և այժմեանից պատրաստություններ են տեսնվում Շահին Թիֆլիսում սպասում են մայիսի սկզբներին:

ԱՄՏԱՔԻՆ ՄԵՆ ԳՐՈՒՄ ԵՆ. «Այս տարվայ

ձմեռը Աստրախանում թէ երկարատեւ և թէ անտանելի էր: Մինչև այսօր, դեռ մարդիկ չեն համարձակում ամառային վերարկու հագնել: Տեղական ուսուցիչն օրացույցում ասված է որ մայիսին էլ խիստ ցուրտ կը լինի (?): Քաղաքը մեռելային կերպարանք է ներկայացնում: Այնպիսիներն և թմրություն է տիրում դէպի հասարակական հարցերը, դէպի գրականությունը և մամուլը: Նշած երկուստարությունը աւելի առանձնացած կեանք է վարում, քան թէ դեկավրոյ է հանդիսանում հասարակաց գործերի: Երթված երկուստարությունից միայն մի քանիսն են աչքի ընկնում իրանց հասարակական գործունէութեամբ: Գրանք էլ ծանրաբեռնված են արդէն ոմանք երեցիկներն: Կան և հոգաբարձական պաշտօններով, ուստի ուրիշ գործերում անկարող են մասնակից լինել: Աստրախան թեմական քաղաք լինելով, նա պետք հանդէս դուրս գար իր սեմինարիայով, և բարեգործական հաստատություններով թեմի միւս մասերը քաղաքների առաջ, բայց տարաբարբար նա այդ դիրքը դեռ չէ գրաւել:»

ԵՐԵՎԱՆԻՑ ԻՆՑ ԳՐՈՒՄ ԵՆ. «Տօները պատճառով հաւաքված մատաղափողերի մասին, այստեղի եկեղեցիների ծախսարանները մասամբ էլ հասարակությունը տեղիս ա. առաջնորդին ցանկություն էին յայտնել, որ այլ ևս այդ փողերը, որոնք տարեկան մօտ 1,500 ռ. են հասնում, չը ծախսի: Պատճառը ծախսի մատուցելու վրա, իսկ մնացած մասը, որ դարձեալ 1,000 ռ. կը հասնի, տայ մի որ և է բարի նպատակին: Չատկի տօնին երբ Բարեգործական ընկերությունն վարչությունն անդամները գնացել էին առաջնորդին չնորհաբերելու դատական տօնը, սրբազանք յայտնելով այդ մասին, ասեց որ կաշխատե՛ այդ միտքը իրագործել տալ և այդ փողերը յատկացնել Բարեգործական ընկերությանը, որի վրա կարող են աւելանալ և մի քանի կտակած փողեր: Այդ առաջարկությունը, ի հարկէ, ուրախութեամբ ընդունվեց, մասնաւոր ինչպէս վարչության անդամներից մէկը ասեց, դրանով ընկերությունը կարող է բանալ հիւանդանոց կամ աղքատանոց: Ցանկալի էր որ այդ բարի ձգտումը իրականանար:»

ԿԱՐՍԻՑ ԻՆՑ ԳՐՈՒՄ ԵՆ. «Արդէն սրբազան Պարզեանց գրաւոր կերպով առաջարկել է տեղիս հոգաբարձութեան հայր նախագահին, որ շուտով նոր հոգաբարձուներ ընտրվեն թէ քաղաքի և թէ վիճակի հայոց եկեղեցական դպրոցների համար: Չատկի տօնից յետոյ պիտի սկսվի ընտրությունը: Հողերը իշխանությունն այս գրաւոր առաջարկությունը կարո հասնելուն պէս, մի երկու բարեկամներին, միայն իրանց անձնական շահը աչքի առաջ ունենալով, կեղծ ճշմարտութեան դիմակի տակ ծածկված, արդէն սկսել են իրանց գիշերային խաղաղայնացեղությունները նոր հոգաբարձուներ պատրաստելու այնպիսի անձնակազմություններ, որոնք ըստ ամենայնի համեմատելի լինեն իրանց հետ և ծառայեն իրանց շահերին: Ահա հասարակ ամենայն տեղ կան մարդիկ, որոնք գնահատան հանգամանքներով տղուկի նման կպած են տեղական այս և այն հաստատություններին և որոնց համար այդ հաստատություններից դուրս մի կտոր ցամաք հայ էլ չը կայ: Ահա այդ տեսակ մարդիկ ամեն տեսակ անարգ և ստոր միջոցներ գործ են դնում, շողորթութում, խաբում, յանուն ճշմարտութեան են քարոզում, խառնում են ժողովուրդը իրար, որպէս զի անպատճառ իրանց ցանկացած մարդիկ հոգաբարձու ընտրվեն: Արժանաւորությունը չէ այդ դէպքում հիմքը, այլ անձնական դիտումները և շահերը:»

ՄԵՐ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ, որ Կարսում մտադրություն կայ բանալու Կովկասեան Բարեգործական ընկերությունն տեղական ճիւղը:

Գաւառացի մի հայ ուսուցիչ ուղարկել է մեզ մի գրություն, որի մէջ ողբալով հայ վարժապետի նիւթական վիճակը և ցոյց տալու համար թէ որքան նեղ է մեր դպրոցական առարկելի վրա գործողների դրությունը, մի հաշիւ է ներկայացնում մեր վարժապետների եկամուտը միայն: Առանց փոփոխութեան առաջ ենք բերում վարժապետի նամակի այդ կտորը, որը նա խնդրում է անպատճառ տպագրել, ոչ իբրև մի կարևոր բան, այլ իբրև մի շնորհ: Ահա նամակի այդ մասը. առաջ բերեց այստեղ հայ ուսուցչի ապրուստի իսկական պատկերը: Ահա նրա տա-

րեկան հաշիւը, որը հաշւած է մեծ առաւելութեամբ: Մուտք տարեկան 400 ռ., որով պիտի կերակրվեն զինուոր հինգ հոգի: Տարեկան ծախք. ամենայնեօրն տան վարձ՝ 60 ռուբլի, վառելիք՝ 40 ռ., հինգ հոգու հագնելիք՝ 50 ռ., թեյ և շաքար (ի հարկէ կծու խմելով)՝ 25 ռ., օրական 20 կ. ցամաք հաց, տարեկան՝ 72 ռ., ծառային (վարձը, հագնելիքը և ուտելիքը)՝ 50 ռ., օրական 20 կոպէկի տարեկան կերակուր, այնքան ծախ, տարեկան՝ 72 ռ., իւր և պանիր տարեկան՝ 15 ռ., աշնանը մի փոքր չիւր, բրինձ, սոխ, ջալամ, կարտոֆիլ՝ 5 ռ., օրական մանր ծախք. նաւթ, մոմ, սապոն, լեղակ, ասեղ, թել, լուցիկ, թուղթ և այլն՝ 30 ռ., «Արարատին» տարեկան 4 ռ., անպատեղի պատահական ծախսեր՝ 10 ռուբլի: Գումարն է՝ 433 ռուբլի: Երբեք ծախքը մուտքից հանելով տարվայ վերջը պարտք կը մնայ 33 ռ.: Ով պիտի տայ այդ պարտքը, ինքն ուսուցչի, ապա դու գինի, օղի, կօֆէ ամենին չը պիտի տեսնես: Հիւանդություն պատահած ժամանակ բժիշկ չը պիտի հրաւիրես, անգամ քիչ հիւրասիրողին մի անգամ էլ դու չը պիտի հիւրասիրես, ոչ մի լրագիր չը պիտի ստանաս, նոր գրքեր չը պիտի կարդաս, ոչ մի տեսակ բարեգործություն չը պիտի մասնակցես, և վերջապէս դու էլ որպէս հոգեղէն մարդ չես և ուրախութիւն սարքել չես սիրում: Ահա այսպիսի դրութեան մէջ է ներկայ հայ ուսուցչի ապրուստը: Ել սև օրվայ համար քրտնոյց խնայողութիւն անէ: Իսկ ահա թէ ինչու՞ որ օրը պաշտօնից ելաւ ուսուցչի, նոյն օրը սոված է:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Յայտնի է, որ ամբողջ թիւրքաց Հայաստանում շատ թեմեր ներկայումս դուրս են առաջնորդներից: Դա նոր ցաւ չէ: Տարեկան են արդէն, որ Հայաստանի մէջ առաջնորդական պաշտօն վարող եպիսկոպոսները թողնելով ժողովուրդը և իրանց վիճակները՝ կենտրոնանում են Կ. Պոլսում, որը, ինչպէս երևում է, շատ դրաւի է երևում փափուկ կեանք վարելու համար: Առաջնորդների բացակայությունը դաւաճանքում, ի հարկէ, աւելի է տակն ու վրա անում տեղական զարդանկար-եկեղեցական գործերը, որոնք ընդհանրապէս ընկած լինելով, կարօտ են լաւ դեկավարների և հսկողների: Բայց տարաբարբար այդ դեկավարները չը կան, քանի որ, ինչպէս ինչեղները, ներկայումս թեմերը դուրս են առաջնորդներից, եղած առաջնորդներն էլ մի առանձին յատկություններ աչքի չեն ընկնում... Գործի այդպիսի դրութեան մէջ, ի հարկէ, իրաւունք կայ սպասելու, որ կենտրոնական վարչությունը, որը իր ձեռքն է առել դաւաճանքի գործերը և իրաւունքը, ջանք գործ դնէր առաջնորդներ նշանակելու թեմերը առաջնորդներից դուրս չը պահելու համար: Սակայն Կ. Պոլսի խառն ժողովը նոյն իսկ այդպիսի կարևոր հարցերում, փոխանակ գործ տեսնելու, նկատողություն է միայն առնում: Ահա թէ ինչ է կարգադրել այդ հարցի մասին խառն ժողովը իր վերջին նիստում: Հսկողությունն առաւ առաջնորդական թափուր վիճակներն և դանդաղ անդիւր չը թողլու համար ինչ ինչ անօրինականներ աւրաւ:»

Անկարելի է հասկանալ այդ ինչպիսի «ինչ-ինչ» անօրինականներն են, որ տասնեակ տարիներից մի վեր անում է Կ. Պոլսի կենտրոնական վարչությունը, որ ոչինչ չօգտվելի բան չէ դուրս գալիս և գործերը միշտ մի և նոյն խառնակ և ընկած դրութեան մէջն են մնում:

Կ. Պոլսից մեզ գրում են հետևյալը. «Մեքենայի եպիսկոպոսը առաջ հինգըսթի օր ոտնալույի արարողությունը կատարեց Պոլսի Գատըգիւղ թաղի մէջ, որ Պոլսի հայոց հարուստ թաղերից մէկն է, հայ վաճառականների կենտրոնական վարչությունը միշտ Գատըգիւղի հայերը շատ հակառակ էին Մեքենայի եպիսկոպոսին, բայց թէ ինչպէս եղաւ այս դարձը, տեղաւիճ լուսաբանված չէ. երկու օր իրար վրա տօն լինելով, այսօր միայն կարելի եղաւ մի քիչ տեղեկություն առնել: Իբրև ստոյգ բան, ասվում է, թէ Մեքենայի եպիսկոպոս կատարեալապէս հնազանդութիւն ցոյց տուած լինելով պատրիարքին, յանձնառու է եղել պատրարագի մէջ յիշատակել Կաթողիկոսի

անունը այնպէս, ինչպէս կը յիշատակեն բոլոր հայ եկեղեցականները: Մեքենայի եպիսկոպոս այսպէս հնազանդութիւն անելով, այլ ևս պատճառ չը կայ նրա դէմ հակառակություն անելու (Իդիլի գերեզմանատան խնդիրը մոռացված է. այստեղ ամեն բան այսպէս շուտ է մոռացվում): Հետզհետեւ Մեքենայի եպիսկոպոս պիտի պատարագէ Պոլսի երեւելի թաղերի եկեղեցիներին մէջ: Հարուստ վաճառականները այժմ յանկարծ Մեքենայի են եղել. իսկ Մեքենայի գեանները ասում են թէ Մեքենայի եպիսկոպոս պիտի չէ մնում իր որջուններու վրա. նրանք ասում են, որ եթէ հարուստ վաճառականները Մեքենայի ջերմ ընդունելութիւն են անում, պատճառն այն է, որ Իդիլի ամենահարուստ վաճառական Պաշէրգեանը այսպէս են պահանջում: Այդ Պաշէրգեանը, որ հսկայական հարստութիւն ունեն և հրապարակի վրա վաճառականական մեծ ազդեցություն, սպառնացել են մի քանի երեւելի վաճառականների մեծ վնասներ հասցնել, եթէ Մեքենայի պաշտպան չը հանդիսանան: Եւ ահա նրանց հնազանդութեան պատճառը: Այժմ կարելի չէ որոշել թէ որն է ստոյգը, պետք է սպասել Մեքենայի եպիսկոպոսի առաջին պատարագին: Այժմ Մեքենայի կի անձնական խնդիրն է, այլ ընդհանուր սկզբունքի խնդիր, տեսնելը որ կողմը կը խոնարհվի: Մեքենայի եպիսկոպոս առաջին պատարագը պիտի մատուցանէ Զատիկի երկրորդ օրը, Մայրեկեղեցու մէջ: Դա պատրիարքի եկեղեցին է: Օրվայ հետաքրքրությունը այս լուրերն են, թէ պէտեւ ամենքն էլ երաշխաւորութեան կարօտ են, նոյն իսկ պատարագ անելու լուրը: Իրողությունը միայն Գատըգիւղի եկեղեցու մէջ գտած ընդունելությունն է:»

Կ. Պոլսի լրագրիները վերջին համարների հետաքրքրական լուրերը հետևելու են. «Պատրիարքը Հայրը չորեքշաբթի օրը կայս. պալատ գրեց Սուլթանի ծննդեան տարեդարձը. չնորհաբերելու համար Ն. Ամենպատուութիւնը ընդունեցաւ երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյին կողմէ և յանուն աղբին չնորհաբերութեան ուղեւձ մը յանձնեց, Սուլթանին մատուցուելու համար: Հաճի Ալի պէյ ուղեւձը տանելով եկաւ Ս. Պատրիարք Հօր հաղորդեց Ն. Վահագնաւորութեան բարձր զոհունակութիւնն և կայսերական բարեկեցութեան Երուսաղեմայ Պատրիարք Յարութիւն Սրբազան ևս նոյն օրը կայս. պալատ գրեց ի չնորհաբերութիւն Սուլթանի ծննդեան տարեդարձին և ընդունուեցաւ երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյ կողմէ: Չորեքշաբթի դիրք Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ Պատրիարքաւոր վարչապետ Լուսազարդուած էր Մայր վարժարանի աշակերտք իրենց երաժիշտ դասատուին առաջնորդութեամբ պատրիարքարան եկան և անդ Սուլթանին ձօնաւել երգ մը երգեցին ի ներկայութեան ժողովուրդեան ստուար բազմութեան մը: Պատրիարքը Հայրը քիչ յետոյ Պատրիարքարանի սրահն եկնելով բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց և բարօրութեան Սուլթանին և օրհնեց զներկայս: Ետոյ շաքարեղէնք բաշխուեցան բոլոր ներկայից և աշակերտաց: Նոյն երեկոյին Երուսաղիմատուն ևս լուսազարդուած էր:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Արեւիք» լրագրին Ռօդոստոյից գրում են ապրիլի 4-ից. «Գեր. Հմայեակ եպիսկոպոս հրաժարել է Ռօդոստոյի առաջնորդական պաշտօնէն՝ յոր կոչուած էր միաձայնութեամբ քուէից: Գաւառական ժողովը մարտ 31-ին ի նիստ գումար վելով՝ զբաղել է սոյն հրաժարականի խնդրին, և մերժել է Հմայեակ սրբազանի հրաժարագիրն: Այլ ն. գերապատուութիւն անդ ներկայ՝ մինչև վերջը պնդել է իւր հրաժարման վրայ, հակառակ միաձայնութեան թախանձանաց ժողովոյն անդամոց:»

Բրիւսելից հեռագրում որ գնեւերալ Բուլանտէ հիւանդացաւ: Քաղաքական հիւանդութիւն է այդ, թէ ֆիզիկական, —այդ յայտնի չէ:

—Ինչպէս գրում են Վիեննայից, ձիաքաշ երկաթուղու կառապանների գործադուլը, որի մասին հեռագիրը արդէն հաղորդել է, շարունակվում է: Խառնակութիւնների ժամանակ աւրիւմանից կուր պատահեց և մի քանի վազօններ ջարդվեցան: Չերբախված են մինչև 100 հոգի:

—Սրանից մի քանի ժամանակ առաջ Եւրօպական լրագրիները լուր հաղորդեցին, որ իբրև թէ մօտ օրերս լորդ Սալըբորի պիտի գնայ Բերլին՝ իշխան Բիսմարկին այցելելու համար վեր-

Ջին տեղեկությունները երևում է, որ այդ լուրը հաստատվել է և անարժան ուշադրություն հանում:

— Գարնադրոշմ են, որ այնտեղ արդեն բնակարան է վարձված Պարսից շահի համար, որը: ինչպես յայտնի է, արդեն ճանապարհ է ընկել Թեհրանից, և դնում է Գարնից ցուցահանդեսը տեսնելու համար:

— Բրիտանից հեռագրում են, որ գնեցրալ Բուլանի Լոնդոն գնալու պատճառն այն է, որ կառավարությունը յայտարարեց նրան թէ որդեկան է նրան հեռացնել Բելգիայի սահմաններից:

— Վերջին ժամանակներս, ինչպես գրում են վերջիններից, առաջինը զարմանալիս գերմանացիները և չեխները փորձ են փորձում հաշտություն կայացնելու միմեանց մէջ:

— Բելգիացի հեռագրում են, որ յոնիս ամսին տեղի կունենայ մանուկ Ալեքսանդր թագաւորի օծումը և թագադրութիւնը:

— Պրուսիայի կառավարութիւնը, որը այս օրերս կարգադրութիւն էր արել խափանելու Բերլինի «Volks-Zeitung» լրագիրը, այժմ նորից թույլատրեց այդ լրագիր լոյս տեսնելու:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԳԱՆՈՒԹԻՒՆԻՅՑ

ՊԵՏԵՐՈՒԳ, 17 ապրիլի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ հաղորդակցութեան ճանապարհների միջնորդի օգնական Սելիֆովսկի, հիւանդութեան պատճառով, հրաժարական տուեց իր պաշտօնից և նրա տեղը նշանակված է սենատի 1 բաժնի օրէր-պրոկուրոր Սելիֆովսկի: Հաղորդակցութեան ճանապարհների միջնորդական մէջ հարց է յարուցված ջրանցք անցկացնելու հետ կապով միջին Ազովիան ծովը: Բանկային գրասենյակների համար հաստատվելի նոր կանոնադրութեան մասին լուրերը աւելի հաւանականութիւն են ստանում: Այսու է, որ կը պահանջվի զբաղեցնել օպերացիաները ապահովանող գրասենյակ, որ կարգվի ունենալ ագենտներ գաւառներում և այլ ևս թիւղ չի տրվի ծախել յետագոյնիստ ներքին փոխառութեան խաղաղութեան տոմսերը: «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է որ զօրքերի համար արդիւնաբերողներ ձեռքով զիւրաւորեցնական միջնորդների հայթայթելը կը մտցնվի այս տարվանից Պետերբուրգի, Մոսկվայի, Վարշավայի, Վիլնայի և Օդեսայի զինուորական շրջաններում: Երէկ կայացաւ Նեվա գետի վրա նաւադնացութեան բացման սովորական հանդեսը:

ՆԻՅՍՍ, 17 ապրիլի: Երէկ, կէսօրից յետոյ, Նիցայից դէպի Մոնակո տանող շոտի վրա վերամբարդեան թաղուհու կառքի ձիաները խրանելով տարան կառքը և իրանը թաւն ճանապարհի պատնէշի այն կողմը: Կապանքները կտրվելով, կառքը ճանապարհի վրա մնաց և թաղուհին անշնա դուրս եկաւ կառքից: Միայն ծառան թեթև կերպով վերադարձաւ է:

ՓԱՐԻՑ, 17 ապրիլի: Երէկ Տօրինում ազդու ցոյց կայացաւ խաղաղական կառավարութեան դադարեցնական քաղաքականութեան դէմ: Փողոցներով անցան հազարավոր կերպով բանտարկան ընկերակցութիւնները, ձեռքերում դրօշակներ բռնելով և մարտէլի էլ երբ երբեմն զինքը զինացրելով դէպի պրէֆէկտի տունը և այդտեղ յանձնեց պրէֆէկտին մի բողոքագիր պատերազմական գործողութիւնների դէմ Արիւնիայում:

ՉԵՆՍՈՒՊ, 18 ապրիլի: Հիւանալի եղանակին և ժողովրդի ահազին բաղմունքան ներկայութեամբ, երէկ ժամը 2-ին տեղի ունեցաւ հանդիսաւոր կերպով այն արձանի բացումը, որը գիւղացիները կառուցել են ի յիշատակ Ազատութեան համար: Արձանի մօտ կատարվեց հոգևոր հանդէս թէ ուղղափառների և թէ կաթոլիկների: Արձանը օծելուց յետոյ, զօրքը մարշով անցաւ և թնդանօթներ արձակվեցան: Ճաշի ժամանակ եպիսկոպոս Բերնեմէյի ճառ ասեց:

ԼՕՆՈՒՆ, 18 ապրիլի: Համայնքների ժողովի շատ անդամներ մտադիր են պահանջել, որ յետ վերջինի այն պայմանագրի հաստատութեան օրինագիծը, որը վերաբերում է շաքարի պրէմիաներին:

ԿԱՐԻՆ, 18 ապրիլի: Լուրերին նայելով չէյն

ԱՆՏԵՐՆԱԿԻ զօրքը տիրեց Խարտումը և Մահալին փախաւ:

ՆԻՒԵՐՈՎ, 18 ապրիլի: Այսօր սկսվեց տօնախմբութիւն, ի պատիւ հարկբաժնի տարեկան ձի այն օրից, երբ Վալինգտոն ստանձնեց Միացեալ-Նահանգների նախագահի պաշտօնը:

ՊԵՏԵՐՈՒԳ, 19 ապրիլի: Հրատարակված է պետական խորհրդի վճիռը այն բանի մասին, թէ Ռուսաստանում օտարականներին պատկանող կալուածները ժառանգելու ժամանակ հարկը վերցվում է ուսանողականներից: Հրատարակված է Բարձրագոյն հրաման. Գորսկոյի համալսարանում Օստոլեյեան երկրի իրաւունքի ամբիոնը դարձնել ուսուցող քաղաքացիական իրաւունքի ամբիոն, պահպանելով մի օրից ամբիոն տեղական իրաւունքը դասախօսելու համար. ուսուցող իրաւունքի ամբիոնը դարձնել ուսուցող իրաւունքի պատմութեան ամբիոն. պետական և միջազգային իրաւունքի դասախօսութիւնը սահմանափակել միայն պետական իրաւունքի դասախօսութեամբ, միջազգային իրաւունքի դասախօսութիւնը յանձնելով զօցենտրի հիմնել օրիցցական իրաւունքի ամբիոն. քաղաքացիական իրաւունքի ամբիոնը դարձնել իրաւունքի ամբիոն, միջազգային իրաւունքի ամբիոնը դարձնել իրաւունքի ամբիոն: Երէկ զեպի իրաւաբանական բաժնից, միացնելով զրա հետ ստատիստիկայի դասախօսութիւնը. իրաւաբանական բաժնում մտցնել իրաւունքի էնցիկլոպեդիայի և փիլիսոփայութեան, եկեղեցական և ֆինանսական իրաւունքի դասախօսութիւնների ընթերցումը. դասախօսութիւնների համար հիմնել զօցենտրի հիմնել պաշտօն: Վերոյիչեալ ամբիոնների համար դասախօսներ նշանակելու ժամանակ ուսանողից կամ այնպիսի անձինքներից, որոնք պարտաւորվել են դասախօսել ուսուցող լեզուով, նշանակել նոյնքան ուսնիկ, որքան ստանում են ուսուցող համալսարանների պրոֆէսորները: Այն պրոֆէսորներին, որոնք արդէն զօյութիւն ունեցող ամբիոններից ուսուցող լեզուով դասախօսութիւններ կը կարգան, նշանակել լրացուցիչ ուսնիկ 600 ռուբլի օրդինանի աւանդով: Կարգվեցին համար, իսկ 300 ռ. էկստրաօրդինանի անուանված պրոֆէսորների համար: Սենատի 1 դէպարտամենտի օրէր-պրոկուրոր Սելիֆովսկի հաղորդակցութեան ճանապարհների միջնորդի օգնական նշանակվելը պաշտօնապէս հաստատվում է: «Новое Время» լրագիրը հաղորդում է մի լուր, թէ վերացվում է երկրորդականների դիւտար պետի պաշտօնը: Երէկ Պետերբուրգ ժամանեց սերբիական Միլայի միտրոպոլիտը:

ՍՕՍԿՆՈՒՄ, 19 ապրիլի: Երկրորդ պալատը վճռեց պահանջել կառավարութիւնից, որ այդ վերջինը մի օրինակի ձեւով արձակի, որով արդեւի մարդարինի պատրաստումը և ներմուծումը:

ՎԻԵՆՆԱ, 19 ապրիլի: Երէկ, ներկայութեամբ Վիեննայի և Պարզայի արքեպիսկոպոսների, Գալիցիայի նախագահի, աւստրիական համարեա ռուր եպիսկոպոսների և արխեպիսկոպոսի բաղմունքով անցանկերի կայացաւ կաթոլիկական համագումար ժողովը: Ժողովի նախագահ ընտրվեց գաղանի խորհրդական Կոնս Բլոմ: Ժողովը որոշեց պապին համակրական մի հեռագիր ուղարկել, որի մէջ բողոք է յայտնվում պապին հողային կալուածներից զրկելու դէմ և պահանջվում է, որ պապը վայելէ ինքնակալի բոլոր իրաւունքները: Հարուստներ և Սէրբատովիչ շնորհաւորական հեռագիրներ ուղարկեցին:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳԻ ԲՈՐՈՍԱ

Ապրիլի 18-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծիւ	93	75
Բերլինի վրա 100 մարկ	45	82
Փարիզի վրա 100 ֆրանկ	36	95
Ռուկի արծիւ	7	49
Մարաշի կուպոններ	149	50
Արծաթ	1	13
Բորային գիւնդաներ	51/8	61/2
Պետական 5% տոմս	1-ին շրջանի	99
—	2-րդ	99
—	3-րդ	99
—	4-րդ	99
—	5-րդ	99
—	6-րդ	99
Նոր 4%	—	85
Արեւելեան 5% փոխառութիւն	1-ին շրջ.	100
—	2-րդ	100
—	3-րդ	100
Ներքին 5% առաջին փոխառութիւն	—	270
—	երկրորդ	242

51/2% ընդհան.	102	75
Ռուկայ ընդհան.	169	50
Նոր 5% ընդհան.	136	50
Նոր 5% ընդհան.	99	50
5% գրաւական թղթեր կալուած.	—	—
—	137	75
—	93	75
—	98	25
—	102	75
6% գրաւ. թղթ. Թիֆլիսի	27	43
—	—	—
—	—	—

Ս. Պետերբուրգի քաղաքային օրի-գացիներ	95	—
Մոսկվայի քաղաք. օրի-գացիներ	93	75
Օդեսայի	95	75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընդ. օր.	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւն	—	—
ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ապրիլի 22-ին, շաբաթ օր, Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենայ

ՏԻԿԻՆ Հ. ՏԵՐԵԱՆԻ

Կ Օ Ն Ց Ե Ր Տ Ը

Կոնցերտի պրոգրամը կը յայտարարվի առանձին աֆիշաներով: Տոմսակները կարելի է ստանալ Լանկոի երաժշտական մագազինում և ժողովարանի շէկցարից:

1—2

ՄԻ ՊԱՏԱՆԻ, որ իր ուսումը ստացել է Վիեննայի Միլիթարիան միաբնութեան մէջ, և հայերէնի հետ զիտէ ֆրանսերէն և մասամբ ուսներէն, ՊԱՇՏՈՆ Է ՈՐՈՆՈՒՄ ԳՐԱՍԵՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՎԱՃԱՍՈՒԿԱՆԵՐԻ ՄՕՏ: Հասցէն. Թիֆլիս, Միքայելեան փողոց, № 81, խանութ Ս. Սոզալեանի: Սարգիս Արթիւնեանի:

Կերակրի, ապրիլի 23-ին, ցերեկայ ժամը 12 1/2-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում բժշկական և արհեստական 80-րդիս ՀԱՅՈՒՆԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կը կարգայ մի ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ «Թաթաւի դէմ նախախնամող միջոցներ» մասին: Տեղերի գները՝ 1 ռ. 50 կ., 1 ռ., 50 կ., 25 կ. Տոմսակները ծախվում են Կենտրոնական գրաւաճառանոցում և ժողովարանում:

1—2

Ը Ն Դ Հ Ա Տ Ե Լ Ո Վ

ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՂԱՆՈՑ

զբի բաժանորդագրութիւնը

Խնդրում ենք այն յարգելի զործականներին, որոնց մօտ գտնվում է բաժանորդագրութեան թերթը, հասցնել մեզ մինչև ապրիլի վերջը, Հասցէն. Тифлиси, типография Мартиросянца, Якову Мелик-Бахтамычу.

2—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅԲԱՆԵԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ռերաթ, 28 ապրիլի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգհաւ ERYMANTHE (ԷՐԻՄԱՆԹ), նաւագետ MERLIN (ՄԵՐԼԷՆ), մանկով Կ. Պօլիս, Պորտ-Ղազա և Լափալայ: Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄԻՄ Կ. Գ. ԷՍՍԷՆԺԷ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԼՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ:

1—2

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՅԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՍԱՄՆԱԳԵԼ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂԱՍԱՄԱՍԱՆ ԿՈՎԱՍԵՆԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿԱՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂԱՍԱՄԱՍԱՆ ԱՍԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՆՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան դղաւաճառատան, և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակկէրի, Սէնչի-կովկաւ և Ալմուրովի դղաւաներում. ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԲՈՒԹԱՅՈՒՄ՝ Կոչեպի մօտ, ԱՍԱՎՐՈՊՈՒՄ, Բրօնօցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕՒԱՐՈՒՄ:

11—52 (Հ.)

РОСКОШНОЕ ИЗДАНИЕ.

Большая хромо-фото-литографическая точная копия съ знаменитой картины художника А. А. Иванова

„ЯВЛЕНИЕ ХРИСТА НАРОДУ“

Съ подлинника, хранящагося въ Московскомъ Публичномъ Румянцевскомъ Музеумѣ. — Огромныхъ размѣровъ хромо-фото-литографія художественно исполненная. — Пояснительный историко-биографическій текстъ составленъ И. О. Токмаковымъ.

Картина «Явление Христа Народу», писанная художникомъ А. А. Ивановымъ въ теченіе тридцати лѣтъ, — сдѣлала цѣлую эпоху въ русской живописи; знаменитые художники какъ-то: Крамской, А. Праховъ и многіе друг. нашли, что означенная картина болѣе проникнута истинно-религиознымъ духомъ и вѣрнѣе, въ историческомъ отношеніи, библейскому характеру событія, чѣмъ всѣ доселѣ извѣстныя заграничныя картины и иллюстраціи подобнаго рода, не исключая и Доре.

Н. В. Гоголь въ своемъ знаменитомъ этюдѣ о картинѣ: «Явление Христа Народу» раскрылъ намъ величіе истинно-русскаго и православнаго творчества Иванова и указалъ на него, какъ на главу русской живописи; это же подтверждаетъ и А. Праховъ въ статьѣ своей: Матеріалы для біографіи А. А. Иванова (жур. «Пчела» за 1875 г. № 23 и № 24). Равно какъ о поманутой картинѣ были вполнѣ сочувственные отзыы въ журналахъ «Воскресный досугъ» 1867 г. № 231 и «Иллюстрированная недѣля» 1874 г. Нельзя такъ же не указать и на отзыы Архимандрита Феодора о картинѣ Иванова СПБ. 1859 г.

Цѣна хромо-фото-литографической картинѣ: Лакрированная на бумагѣ — 1 р. 50 коп., на холстѣ 2 р. 50 коп. За пересылку и упаковку на скалкѣ 50 коп. Подписавшимся на 10 и болѣе экз. — 20% уступки.

Адресъ: Москва, Мясницкая, магазинъ церковныхъ утварей Сытовы сыновья, соб. домъ.

3—5